

ՇԱՔԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏ

ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ
ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ



ԻՆՉ Ե ԾԱՔԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏԸ

Շաքարային դիաբետը քրոնիկ հիվանդություն է, որը բնորոշվում է հիպերգլիկեմիայով՝ արյան գլյուկոզայի բարձրացումով: Այն առաջանում է ինսուլինի արտազատման խանգարման և/կամ ինսուլինի ազդեցության խանգարման հետևանքով:

Ինսուլինը հորմոն է, որն արտադրվում է ենթաստամոքսային գեղձի, այսպես կոչված "Լանգերհանսյան կղզյակների" բետտա-բջջերում: Ինսուլինի ոչ լիարժեք արտազատումը և/կամ ինսուլինի անբավարար ազդեցությունը թիրախ-հյուսվածքների վրա առաջացնում է ածխաջրատային, ճարպային և սպիտակուցային փոխանակության խանգարումներ:



ԻՆՉՊԵ՛Ս ԲՈՒԺԵԼ ԾԱՔԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏԸ

Շաքարային դիաբետ տիպ 1-ի միակ բուժումը ինսուլինաթերապիան է: Այն իրականացվում է ենթամաշկային ներարկումների ձևով:

Ինսուլինոթերապիայի ժամանակ խորհուրդ է տրվում՝

- 1. օրը 6-8 անգամ չափել գլյուկոզան արյան մեջ,
- 2. հաշվել սննդում ածխաջրատների քանակը,
- 3. հաշվի առնել ֆիզիկական ակտիվությունը:

ԻՆՉՊԵՍԻ՞Ր ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՌԱՋԱՆԱԼ ԾԱՔԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ

Չկոմպենսացված շաքարային դիաբետի հետևանքով առաջանում են սուր և քրոնիկ բարդություններ:

Սուր բարդություններից է հիպոգլիկեմիան (գլյուկոզայի նորմայից ցածր մակարդակ), ընդհուպ մինչև հիպոգլիկեմիկ կոմա:

Քրոնիկ բարդություններից են՝

- 1. Երկվամների ախտահարում (նեֆրոպաթիա),
- 2. Աչքերի ցանցաթաղանթի ախտահարում (ռետինոպաթիա),
- 3. Սիրտ-անոթային հիվանդություններ,
- 4. Ծայրամասային անոթների և նյարդերի ախտահարում:

Շաքարային դիաբետի բարդություններից խուսափելու համար անհրաժեշտ է՝

- 1. Արյան գլյուկոզայի մակարդակը պահել նորմայի սահմաններում:
- 2. Դինամիկ հսկողություն էնդոկրինոլոգի կողմից:



ԾԱՔԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏԻ ԻՆՉ ՏԵՍԱԿՆԵՐ ԿԱՆ

1 ՏԻՊ 1
Այս ժամանակ տեղի է ունենում բետտա-բջջերի աուտոիմուն ախտահարում, որի հետևանքով ինսուլինի արտադրությունը օրգանիզմում արակտիկորեն բացակայում է: Առավել բնորոշ է երեխաներին: Բուժումը՝ ինսուլինոթերապիա:

2 ՏԻՊ 2
Այս ժամանակ խանգարված է ինսուլինի ազդեցությունը և/կամ սեկրեցիան: Առավել բնորոշ է մեծահասակներին: Բուժումը՝ շաքար իջեցնող հաբեր:

Ո՞Ր ԱՆՏԱՆԻՇՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԴԻՄԵԼ ԲԺՇԿԻ

- Արտահայտված ընդհանուր թուլություն,
- Քաշի կտրուկ կորուստ,
- Ծարավի անհագ զգացում,
- Շատախմություն,
- Հաճախամիզություն:



 Այս բոլոր գանգատների դեպքում խորհուրդ է տրվում որոշել գլյուկոզան արյան մեջ:

ՈՒԻԳՄՈՐԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ, ՈՐ ՍԻՐՏ ՈՒՆԻ...

